

Աւետիսի նիկողայոսեան, որով հաստատե զնոսա ի պաշտօն հոգարար-
ձութեան զպրոցի Հայոց Գեորգի գեղջ Փամպակու գաւառի, 19 օգոստ.
1881 ամի. թ. 309.

Առնդակ յանուն Անդամաց Հոգաբարձութեան ներսիսեան - Ազգային -
Հոգեւոր զպրանոցին Հայոց Տփլիսեաց, որով յայտնէ թէ՛ կարգեցաւ Պ.
Արշակ նահապետեանցն լիազօր Տեսուչ Ս. Գեորգեան Ճեմարանի Սրբոյ
Էջմիածնի և միանգամայն պատուիրէ նոցա ազատ կացուցանել զնա ի
Տեսչական պաշտօնէ յիշեալ Գպրանոցի զՊ. Արշակն նահապետեանց, 21
Օգոստ. 1881 ամի. թ. 310.

Առնդակ յանուն Կարապետ քահանայի Պոյաձեան Բուսճուկայ, որով
ըստ խնդրանաց թաղական խորհրդոյ Բուսճուկայ շնորհէ նմա հրաման առ
ի կրել ի զլուս իւր զկամեալֆկայ անուանեալ զլիարկն վասն զանազան
վաստակոց և աշխատութեանց նորին յօգուտ ժողովրդեան և եկեղեցւոյ
21 Օգոստ. 1881 ամի. թ. 311.

Առնդակ օրհնութեան յանուն թաղական խորհրդոց և համայն ժողովր-
դեան Բուսճուկայ որով օրհնէ զնոսա և զովէ և միանգամայն յորդորէ
հաստատուն կալ ի միութեան սուրբ կրօնի և այլն 21 Օգոստ. 1881 ամի
թ. 312.

Առնդակ յանուն Արշակայ նահապետեանց, որով կարգէ և հաստատէ
զնա ի լիազօր Տեսուչ Ս. Գեորգեան Ճեմարանի Սրբոյ Էջմիածնի, 1 Սեպտ.
1881 ամի. թ. 331.

Գրութիւն յանուն նախագահի Հնադիտական ժողովոյ Տփլիսեաց, որով
առաքեալ ի զիմաց իւրոց զբարեշնորհ Խորէն Ծ. վարդապետն Սանիանէ
իր պատուիրակ յանդամակցութեան ժողովոյն, խնդրէ ներկայացուցանել
հետազօտութեան զձեռագիրն Հայկական նշանագրոց և ուղարկութեանց
և այլն 4 Սեպտ. 1881 ամի. թ. 334.

Առնդակ շնորհակալութեան և օրհնութեան առ Անդրէաս Արքեպիսկո-
պոսն յարձակելն զնա ի Տեսչական և ի կառավարչական պաշտօնմանց Ս.
Գեորգեան Ճեմարանի Սրբոյ Էջմիածնի. 10 Սեպտ. 1881 ամի. թ. 352.

Առնդակ յանուն պ. Պօղոսի Մոսխիսեան ներսէսեանց Համախնցւոյ
սակս բարեջան վաստակոցն յաւարտ ամենոյ զվերանորոգութիւն խախ-
տեալ Աւագ եկեղեցւոյն Համախնցւոյ և այլն. 14 Սեպտ. 1881 ամի. թ. 353.

Առնդակ օրհնութեան առ իշխան Յովսէփ Փարսատանեանց երկացնարա-
գուկ Արղուութեանց սակս վերաշինելոյ նորա սեպհական արդեամբք իւ-
րովք զխախտեալ տանիս Սանահնոյ վանից և այլն. 14 Սեպտ. 1881 ամի
թ. 354.

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր .

Ֆեֆէից -յը-ձէ Դէշ: Ինչպէս յայտնի է, Փոսֆորի պրածը իւր հե-
տեանքներով շատ վտանգաւոր է, Փոսֆորից պրածի վերքը պէտքէ ա-

ուանց յետաճգելու լուսնալ սօղայով, որ թուլացնում, ոչնչացնում է գործողութիւնը ֆոսֆորի:

* *

Մըջիւնէրէ հաշիւ, Հռչակաւոր ուսումնական Ջօն—Լէրբօկ հաղորդումէ հետաքրքիր փորձեր, որոնք նա արել է միջուկների զգայականութեան մասին գոյների վերաբերութեամբ:

Մըջուկները լուսից վախում են և թէ քանդես նոցա կիտուկ հողը, նոքա աշխատում են թագցնել ձուերը մութ տեղ, Սրա վրայ հիմնուելով, Լէրբօկ հետազօտեց լուսի ազդեցութիւնը միջուկների վերայ և գտաւ, որ նրանք զգում են գոյների զանազանութիւնը, Բայց նրանից յետոյ պարզեցաւ երեւելի փաստ, թէ այդ զգայականութիւնը այնքան աստիճանի զօրաւոր է, որքան զօրաւոր է սպիքտրի ճառագայթների քիմիական գործողութիւնը, Այսպէս, զորօրինակ միջուկները տեղափոխում են ձուերը կանաչ լուսից դեպի դեղինը, թէպէտ վերջին գոյնը մեզ համար աւելի պայծառ է, Փորձերը ցոյց տուին, որ միջուկները զգում են և փայլուն մանուշակագոյն լոյսը և փախչում են նրանից դեպի կարմիր գոյնը, Սէր—Ջօն—Լէրբօկ կարծում է, թէ միջուկները տեսնում են գոյները բոլորովին ուրիշ կերպիւ և առարկաները ներկած են երեւում ուրիշ գոյնով քան թէ մեզ:

Այդպէս են վերաբերվում դեպի գոյները և քանի մի թեփոտ կենդանիների, Լէրբօկը արել է շատ հետազօտութիւններ միջուկների վրայ և հաղորդել է, թէ նա ունի 7 տարեկան միջուկներ, մինչև հիմա կարծում են, թէ միջատները չեն կարող այդպէս երկար ապրել:

* *

Օշինդրէ Բարէր—դրեց—Ռէնը (Էլէն), Պուարէ յայտնում է օշինդրի զանազան տեսակ, որ ծածկում է Հիւսիսային Ամերիկայի ահագին հողերի տարածութիւնը, սօր նա երբեք չի նկատել ոչ ճանձ, ոչ միջուկ, ոչ թրթուր, ոչ ուրիշ միջատների, ոչ կարիճների, ոչ տարանառւ (մորմ) և ոչ օձ: «Ըստ իմ կարծեաց, ասում է նա, թէ աւտոր փիլօքսէրա նոյնպէս կարող չէ ապրել այդ բոյսերի վրայ երկար ժամանակ, և բացի դրանից այն հողի մէջ, յորում պատահում են օշինդրի մնացորդներ, օշինդրը կարելի է հեշտութիւնով բազմացնել հին աշխարհումը, Ճիւղերը անկելով հողի մէջ, կարող են կազմել փիլօքսէրայի հակառակ զօրաւոր դեղ*):

(*) Փիլօքսէրան է այն միջատը, որ վնասում է խաղողի վազներին: